# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԵԼ4008 ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴ-26/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Մեդալը բաղկացած է 2 մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացած երկկողմ պատկերով սկավառակից: Մեդալի կախիչը ասեղային ամրակով է: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24, որը երեսպատված է 24 միլիմետր լայնություն ունեցող մետաքսե մուգ կապույտ ժապավենով, որի եզրերով երկու կողմից անցնում են կարմիր՝ 1.5 միլիմետր լայնությամբ զոլակներ: Մեդալն արտադրվում է պղնձի հատուկ համաձուլվածքից և պատվում է 999 հարգի ոսկով: Մեդալի տրամագիծը 38 միլիմետր է: Մեդալի հաստությունը՝ մոտավորապես 4 միլիմետր (± 10% շեղում): Մեդալի եզրագծին զուգահեռ՝ դիմերեսով, անցնում է 2 միլիմետր լայնությամբ շրջան, որի վերևի հատվածում կորաձև առկա են հայատառ, ռելիեֆային, ուռուցիկ «ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ» բառերը: Մեդալի դիմերեսին՝ կենտրոնական մասում, առկա է 25.5 միլիմետր տրամագծով շրջան, որի կենտրոնում տեղակայված է 18.3 միլիմետր տրամագծով Կոմիտեի ռելիեֆային լոգոն՝ պատված սպիտակ էմալով: Շրջանի եզրագծին զուգահեռ առկա է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» ուռուցիկ, ռելիեֆային գրառումը: Գրառման կենտրոնում տեղադրված են 4.2 միլիմետր երկարությամբ տերևներ, որոնք ձգվում են աջ և ձախ: Շրջանը արտաքինից՝ վերևի հատվածում, եզերված է կիսալուսնաձև Հայաստանի Հանրապետության դրոշը խորհրդանշող եռաշերտ գոտիով՝ զարդարված եռագույն քարերով (կարմիր՝ 59 հատ- նանոբյուրեղ, կապույտ՝ 55 հատ-նանոբյուրեղ, ծիրանագույն՝ 52 հատ- ցերկոն): Մեդալի կենտրոնում տեղակայված է Թեմիդայի արձանը՝ ի նշան հավասարության, անաչառության, իրավակարգի և օրինականության ամրապնդման: Մեդալի դիմերեսը ներքևի հատվածում զարդարված է դափնու տերևներով, |

| | |
|---|---|
| | որոնց լայնությունը կազմում է 4.6 միլիմետր: Դափնու տերևները ձգվում են կենտրոնից դեպի աջ և ձախ: Մեդալի դարձերեսին՝ ներքևի հատվածում, դաջված է Մեդալի եռանիշ հերթական համարը: Վաճառողը Գնորդին պետք է ներկայացնի փորձաքննության եզրակացություն մատակարարվող մեդալների տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ: Մեդալի հետ հանձնվում է նաև իր տուփը: Տուփ՝ չափերը՝ 120x100մմ, բարձրությունը 30մմ, կազմված կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից, երեսպատված դիզայներական պլայկ թղթով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում կրծքանշանի չափերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեդալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N 35 ուժով): Կափարիչի վրա ՀՀ քննչական կոմիտեի լոգոտիպի 50 մմ տրամաչափով UV տպագրություն: Տուփի գույնը մուգ կապույտ: Ապրանքի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԵԼ4008 ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴ-26/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |